

Բ.

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՓՈՏԻ ԶԱՆՔԵՐԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ

Կ. ՊՕԼՍՈՅ ԿԱՄ ՅՈՒՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ *

Փոտի օրով հայ եկեղեցու հետ յարաբերութիւնը վերանորոգուեց առաջուանից աւելի ընդարձակ չափերով: Թ. դարի միջին մասում Հայաստանը վերակենդանանում է քաղաքականապէս և հոգևորապէս: Խալիֆայութեան վերին հովանաւորութեան տակ ձալով ունենում է որպէս կառավարիչ Բագրատունի Աշոտ Ա. ին իշխանաց իշխան տիտղոսով (859 թ.): Հայաստանում սկսում է համեմատաբար խաղաղ ժամանակ. իսկ Աշոտը հովանաւորում է երկրագործութեան, վաճառականութեան և կրթութեան զարգացում: Կաթողիկոսութեան գահն էր բարձրացել 853 թ. լուսամիտ Զաքարիան: Երկրի խաղաղ վիճակը թոյլ էր տալիս զբաղուել կրօնական խնդիրներով. իսկ Աշոտը ստանալով իշխանաց իշխան տիտղոսը ձգտում էր, որ Բիւզանդիան էլ ճանաչի իւր նոր դիրքը, ինչպէս յետոյ նա ձգտում էր, որ Վասիլ մակեդոնացին էլ հաստատի իւր արքայական կոչումն, որ դաւանարանական թղթակցութիւնների արտաքին պատճառը դարձաւ: Թղթերից երեքն են ձեռացել. Փոտի երկու թղթերը մէկը Զաքարիային և միւսը՝ Աշոտին, և Աշոտի պատասխան թուղթը: Այս թղթերից մէկն էլ այն է, որ յայտնի է «Պատասխանի թղթոյն Փոտայ. գրեալ Սահակայ Հայոց վարդապետի, հրամանաւ Աշոտոյ իշխանաց իշխանի¹⁾»: Այս թղթերից երկուսն է, որ դրանցով չէ սպառւում թղթակցութիւնը, բայց միւս զոկումենաները մեզ չեն հասել կամ, գոնէ, չեն գտնուած դեռ:

*) Տես Արարատ Ազրիլ-Մայիս. 555—560:

1) Գիրք Թղթոց (եր. 283—294). Գիրք Թղթոցում կայ միայն երկու Թուղթ, մէկը Փոտի՝ . . . «Առ Աշոտ իշխանաց իշխանն (եր. 279—282) եւ միւսը Աշոտի կողմից Սահակ վարդապետի Թուղթը՝ առ Փոտ. Զաքարիայի Թուղթը չկայ: Փոտի այս Թղթում ամենեւին ակնարկութիւն չկայ, թէ այն գրուած լինի յատկապէս Զաքարիայի Թղթի հետեւանքով: Զաքարիային գրուած Թղթի բովանդակութիւնը մէջ է բերում Վարդան պատմիչ (Վենետ. 1862 եր. 82—83):

Թղթակցութեան նախաձեռնողը կաթուղիկոսն էր, որը մեզ չհասած թղթով դիմում էր Կ. Պօլսոյ պատրիարքին առաջարկելով բարեկամութիւն սկսել անջատուած երկու եկեղեցիների միջև. մէջ էր բերում իւր տարակուսութիւնները Քաղկեդոնի ժողովի վերաբերութեամբ և հերքում է հայ եկեղեցու վերաբերութեամբ մեղադրութիւնը թէ նա աշակերտում է Յակովբ Մանժաղոսի, Յուլիանոս Ալիկանացու, Պետրոս Անտիոքացու (Փուլլոն) և Եւտիքէսի հետևողներին, պնդելով որ հայք Ս. Գրիգոր Լուսաւորչին են աշակերտում: Չաքարիայի առաջարկութիւնը, որ կարող էր Կ. Պօլսում ընդունուած լինել 860—861 թ. առիթ տուեց Փոսին, երկար թղթով պատասխանել կաթուղիկոսին:

Նամակը¹⁾ բացի ներածութիւնից երկու մասն է բաժանուում—պատմական և դաւանաբանական—վիճական: Առաջին մասի նպատակն է ապացուցանել, որ հայ եկեղեցին դարերի ընթացքում ընդունել է Քաղկեդոնի ժողովը և, մինչև անգամ հերքելով այն, յետոյ շատ անգամ յունական եկեղեցու հետ հաղորդակցութեան մէջ է եղել: Երկրորդ մասը ապացուցանում է, որ անհնարին է մտածել, թէ ընդհանրական համայն եկեղեցին կորցրել է ճշմարտութիւնը և միայն հայ եկեղեցին է պահել այն. հաստատում է յունական եկեղեցու հեղինակութիւնը հաւատոյ գործերում և պարզում է, տիեզերական ժողովների պատմութեան առընչութեամբ, Քաղկեդոնի ժողովի համաձայն լինելը երեք առաջիններին, հերքելով նրա դէմ մի քանի առարկութիւնները:

Փքուն տիտղոսներ ձօնելով նրան, որին ուղղել է թուղթը, Փոսը գոհանում է Ասածուց, որ արժանացրել է իրան կաթուղիկոսի թուղթը կարդալուն, որը առաջարկում էր բարեկամական յարաբերութիւն սկսել, և ուրախութիւն է յայտնում, որ «Չաքարիան տարակուսութեան և թիւրիմացութեան մէջ լինելով Քաղկեդոնի ժողովի վերաբերութեամբ, և ինչ ինչ լուրերի ազդեցութեան տակ կարծելով, որ ժողովների ճշմարտութեան հակառակ է», պնդում է, որ հայերը ոչ թէ միաբնակներ են, այլ ս. Գրիգոր Լուսաւորչին են աշակերտում: Եթէ այդպէս՝ ուրեմն այդպիսի ուսուցչի աշակերտները չը պէտք է հրապուրուեն իրանց ենթադրութիւններով, այլ պէտք է հետևեն Ս. Գրքերին, բնաւ չխեղաթիւրելով նրանց, ինչպէս այդ անում են հերետիկոսները:

1) Ռուս հեղ. աղբիւրն է. Палестинскій Сборникъ. Вып. 31, томъ XI. вып. I. 1892 թ.

Թղթի հետևեալ պատմական մասը, որ կազմուած է, ըստ գրողի, հիմք առնելով սարժանահաւատ հետախուզութիւնն ու քննութիւնը, բաւական շատ անճշդութիւններ ունի, որ պատկանում են գուցէ մասամբ հեղինակին և առաւել ևս՝ բնագրի աղաւաղմանը:

Ս. Սահակի մահուանից 12 տարի յետոյ ս. Վարդանի և նրա դօրքերի նահատակութեան տարին, Յովսէփ Աւոնդեանի ¹⁾ կաթողիկոսութեան ժամանակ, տեղի ունեցաւ Քաղկեդոնի ժողովը (451 թ.): Հայերը պարսիկներից վտանգուելով ժողովին շմասնակցեցին. և այդ պատճառով ժողովի հանգամանքների իսկական արտայայտութիւնը նրանց չհասաւ: Մանաւանդ որ ժողովի մասին հակաճառութիւններ գոյութիւն չունէին, և Հայաստանում նրան ընդունում էին մինչև Դուինի ժողովը 103 տարիների ընթացքում ²⁾, այսինքն Մարկիանոսի (450—457) վերջին երկու տարիներից մինչև Յուստինեանոսի (527—565) տասն երրորդ ³⁾ և Ներսէս Բ. Աշտարակեցու վեցերորդ տարին:

Պարսից Խոսրովի թագաւորութեան 23-րդ ⁴⁾ տարին Ներսէսը Դուինում ժողով դումարեց ասորի Արդիշօի ^{*} զորժակցութեամբ,

1) Հեղինակի սխալն ակներև է. Յովսէփը չէ Աւոնդեան, այլ Յովսէփ եւ իւր հետ նահատակուող բոլոր հոգեւորականները, որոնք արժանացան մարտիրոսական պսակին, կոչոււմ են Աւոնդեանք: Աւոնդ երէցի անունով. որ իւր անվեհերութեամբ, նարտարարանութեամբ եւ անձնագոհութեամբ առաջին տեղն էր բռնում իւր ժամանակի անձնագոհ հոգեւորականութեան մէջ. Տես Եղիշէ, Ազգար փարպեցի: Հայ բարզմ.

2) Հեղինակի ակնարկած անճշդութիւններից մէկն էլ այս է: Եթէ ընդունենք որ Բարդէնի ժողովը տեղի է ունեցել ամենաուշը 506 թուին, ուր մերժուեց պաշտօնապէս Քաղկեդոնի ժողովը, (506—451) 55 տարի կը լինի. եւ այն ժամանակ՝ երբ ամբողջ Բիզանդական կայսերութիւնը ալէկոնձոււմ էր Քաղկեդոնի ժողովի մասին վէճերով, Հայք մասնակցած չլինելով ժողովին, եւ գրադուած լինելով իրանց ներքին տաղնապալից վիճակով, բնական է, որ ժողովը ընդունելու մասին չէին մտածի: Եթէ ընդունենք իսկ Յուստինեանոսի 10-րդ տարին, այսինքն 557 թ. կը լինի 86 եւ ոչ 105 տարի: Հայ բարզմ.

3) Պէտք է դնել կամ 27-րդ տարի, կամ հասկանալ տասներորդ տարու տեղ՝ տասն Տշղազոյն եւս՝ վերջից հաշուելով՝ 11-րդ, ինչպէս վերը հաշուած է Մարկիանոսի երկու վերջին տարին, Յէեւ վերջին հասկացողութիւնը կը լինի արուեստակեալ: Թուս. հեղ.

4) Բնագրում 14-րդ տարի: Խոսրով Ա. թագաւորեց 554—579 թ. Թուս. հեղ.

* Վարդանը (եր. 84) շխարհիսոյ Ասորւոյ, որ եկեալ էր ի Սասնոյն. Հ. Բ.

որ Սասուկի Սարեփթա վանքից էր եկել: Նրանք ընդունեցին Դիոսկորոսին, Նարուկ քաղաքի եպիսկոպոս Փլարիանոսին¹) և Ալէքսանդրիայի Տիմոթէոս էլուրին (Տէմոթէոս Կուղ), և հայերէն թարգմանեցին Քաղկեդոնի ժողովի մասին բազմաթիւ ամբաստանութիւններով գրուած քննորդ, որի համար և կոչուեցին կրտսեր թարգմանիչներ²): Ըստ աւանդութեան նրանք հաստատեցին Քրիստոսի մէջ աստուածային և մարդկային մի բնութեան վարդապետութիւնը, «Սուրբ Աստուած» ի մէջ մտցրին յաւելուած («Յաշեցար վասն մեր») և, նշովելով յոյներին՝ հրաժարուեցին նրանց հետ հաղորդակցութիւնից: Հայերի յոյներից վտարանջելովը շատ ուրախ եղաւ պարսից թագաւորը, և առաջուց տուած խոստումը կատարելու համար իւր որդին որդեգիր տուեց կաթուղիկոսին, նրան էլ, իւր եպիսկոպոսների հետ միասին, յանձնելով հարկերի գանձումներ:

Թղթի հետևեալ տեղեկութիւնը հեղինակը կամ առել է աղաւաղուած աղբիւրներից կամ աղաւաղուել է յետնագոյն ընդօրինակողներից:

Հայոց 16 թուականին, գրում է Փոտը, անհնազանդ Վարդան Մամիկոնեանը սպանեց պարսից փոխարքայ Սուրէնին, այն պատճառով, որ նա խլելով ազնուական դասակարգից պատիւը օժտել էր եպիսկոպոսներին²):

Վարդանը ստիպուեց փախչել Յունաստան, Յուստինիանոսի 17-րդ տարին այսինքն 544 թ. երբ նա կառուցանում էր ս. Սոփիայի տաճարը: Ս. Յաշի տօնին Վարդանը հրաժարուեց յոյների հետ հաղորդուելու ս. Խորհրդին, առարկելով որ իւր վարդապետները արգելել են: Այն ժամանակ թագաւորը 130 եպիսկոպոսներով ժողով գումարեց, մասնակցութեամբ հայերի, որոնք ընդունեցին քաղկեդոնական որոշումները: Այս հին-

1) Հայ պատմութեան համեմատ անդրանիկ թարգմանիչները համարում էին նրանք, որոնք զործակից եղան Ս. Սահակին եւ Մեսրոպին Ս. Գիրքը թարգմանելիս, իսկ կրտսեր նրանք, որոնք Ձէեւ յիշեալ սուրբերի տնօրէնութեամբ զնացին արեւմուտք ուսանելու, բայց բազմ չունեցան վերադարձին իրանց մեծ վարդապետներին կենդանի տեսնելու. Լ. Բ.

2) Իսկապէս՝ Սուրէնը սպանուեց 372 թ. ապստամբութեան ժամանակ, որ Վարդանը յարուցել էր նրա դէմ կրօնական հալածանքների եւ հայերի հետ քանակալ վերաբերմունքի հետեւանքով: Բայց եւ ապստամբութիւնը յաջողութիւն չունեցաւ. Թ. հեղ.

*) Վարդան. Փիլոքսիոս. Լ. Բ.

**) Վարդան (եր. 84) «եկն առ Յուստինիանոս յԵրեսներորդ ամի թագաւորութեան նորա և ի տօնի Յաշվերացին»: Լ. Բ.

գերորդ ժողովու է¹⁾։ Հաւատոյ մասին բանակցութիւնները վերանորոգուեցին և Մաւրիկիանոսի (Մօրիկ) օրով, երբ Մուշեղ Մամիկոնեանը, հայ և յոյն զօրքերով պարսից թագաւորութիւնը հնազանդեցնելով Խոսրովին *) (Խոսրով Բ. 590—628), Խոսրովից պատուով վերադարձաւ Յունաստան։ Նոր (160 եպիսկոպոսներից) ժողով գումարուեց, որը կոչուեց վեցերորդ, եպիսկոպոսներից 21-ը հայ էին. և հայերը, քննելով Քաղկեդոնի ժողովը, ընդունեցին այն Մովսէս կաթողիկոսի օրով²⁾։

Աւելի ճիշդ է կազմուած պատմական բաժնի եզրակացութեան մասը — Հերակլի օրով միութեան մասին։

Յաղթելով պարսիկներին՝ Հերակլը մտաւ Կարին (էրզերում) և հրաւիրեց Եզր կաթողիկոսին, բազմաթիւ հայ եպիսկոպոսներ և ասորիներ։ 30 օրեայ քննութիւնից յետոյ հայք ընդունեցին Քաղկեդոնի ժողովը «յօժարակամ և ոչ բռնի»³⁾։ Բայց Յովհան Մայրապոսեցին, ախտացած Մարէլի և Պետրոս Անտիօքացու ախտով,

*) Վարդան (84) «նուաճեաց զԽոսրովու թագաւորութիւնն, և դարձաւ պարզեօք»։ Հ. Բ.

1) Եւրպարների իշխանին դրած Պղծում Փոսր հինգերորդ տիեզերական ժողովի մասին տալիս է ըստ ամենայնի ճիշդ տեղեկութիւն, մատնանշելով անդամների թիւր 165. Աոյն Պղծի մէջ յիշուած եպիսկոպոսների մասնաւոր ժողովը, հայ եպիսկոպոսների մասնակցութեամբ, անկասկած Հայաստանի յունական բաժնից, շփոթուած է հինգերորդ տիեզերական ժողովի հետ (555 Պ. որպէս գումարուած Յուստինոսի օրով։ Ռ. հեղ. Կը յաւելացնենք որ Վարդանի մէջ (եր. 82) հայերի մասնակցութեան մասին խօսք չկայ։ Հայ բարզմ.

2) Ինչպէս նկատուած է վերեւ, Մովսէսը չէ ընդունել Քաղկեդոնի ժողովը, եւ յունական եկեղեցու հետ կարճ ժամանակեայ հաղորդակցութեան մէջ մտան միայն յունական Հայաստանի եպիսկոպոսները։ Վեցերորդ տիեզերական ժողովը էր ոչ թէ Մաւրիկոսի (582—602) այլ Կոստանդին Պոզոնատի (668—685) օրով 684 թուին. Ռուս հեղ.

3) Թէպէտ ընդունուած է համարել, որ Կարինում գումարուեց ժողով եւ Եզրը ընդունեց Քաղկեդոնականութիւն, բայց ըստ Սերեոսի՝ Եզրը յունաց զօրավար Մժէժ Գնունու սպառնալիքի տակ ստիպուեմ է զնայ Ասորեստանի երկիրը, տեսնում է Պաղատորին եւ նրա օրէնքով հաղորդում է Եւ ինդրելով Պաղատորից պարզեւ Կողբայ աղը, եւ անելով պարզելը՝ մեծ շքով դարձաւ իւր տուն՝ Եզրը ինդրում է Պաղատորից հաւատոյ ձեռնարկ։ «Եւ վաղվազակի առարեցաւ նմա տումար գրեալ ձեռամբ Պաղատորին ու նզովեալ զՆեստոր եւ զամենայն հերձուածոցս։ Բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի։ Եւ զնաց կաթողիկոսն յերկիրն Եսորեստանի, ետես զՊաղատորն եւ հաղորդեցաւ ընդ նմա օրինօք։ . . . Եւ

զրգուճ էր հայերին, որի պատճառով Հերակլի որդի Կոստանդինի օրով (641) Ներսէս Շինողից և Թէոդորոս Ռշտունեաց իշխանից ճակատին աղուեսադրոշմ ընդունելով Կովկաս աքսորուեց: *) Սակայն Ներսէսի մահից յետոյ նա վերադարձաւ և իրադործեց իւր մտադրութիւնները Մանազկերտի ժողովում (651), երբ Սարգիսը հայերէն թարգմանեց Յուլիանոս Աղիկաոնացու գիրքը:

Ուրեմն, հայ եկեղեցին չնայելով իւր պատահաբար անջատմանը ընդհանրականից, յարաբերութիւնը վերջնականապէս չէր խզել, երբեմն երբեմն պահուճ էր իւր կապը նրա հետ: Անցնելով ուղղակի փաստերին, ի պաշտպանութիւն յոյն հոեմեդական, աւելի

յայնմհետէ նստէր ի մէջ քանակին յունաց... (Սեր. Ս. Պ. 4879-եր. 101. զլ. 2^թ): Ըստ այսմ. Արքայ չգիտէ Կարնոյ ժողովի մասին, եւ Նզրի ու հայոց ընդունելը քաղկեդոնի ժողովի որոշումն չէ՝ եղել յօժարակամ, այլ բռնի եւ կաթուղկոսը Աօրհատանումն է հաղորդուել կայսրի ճետ: Վարդան պատմ. (եր. 61) ասում է... դեմն գեղը Նիգացի, զոր կոչեաց Սաղաւորն ի Կարնոյ քաղաք. որ վասն տղիտուճեան եղել քաղկեդոնիկ, առեսոյ զԱղցք եւ զերրորդ մասն Կողբայ դին հաւատոյն...: Երկրոր հայ պատմիչները դիկամակուճեամբ են յիշում Նզրի այս վարմունքը:

Հայ բարզմ.

*) Վարդան պատմ. (եր. 84-88) ասում է. Արար և Հերակլ եօթներորդ ժողով. իսկ Մայրապանեցին (Մայրազումեցի) Յովհան ոչ ընկալաւ, զոր Թէոդորոս Ռշտունի և Ներսէս հալածեցին ի Կովկաս, և յետոյ եկն ի Հայս և արար, զոր ինչ կամեցաւն. և ի յունաց ի բաց կացին հայք նդովիւք չափ, և առաւել. յորժամ թարգմանեցին զգրեանն Յուլիանեայ Աղիկաոնացւոյն ի ձեռն Սարգսի ի ժողովն Մանազկերտոյ: Նոյն Վարդանը (եր. 62) ընդ ի դառնալն նորա (Նզրի) կշտամբեաց զնա Յովհան վարդապետ կաթուղիկոսարանի, ասելով. Յիրաւի Նզր կոչեցար, զի յեզր ելեր յուղղափառութենէ. և ինքն շոգաւ յԱղուանս, ի գլուխ Գարդման գաւառի, և ճգնեցաւ խիստ վարիւք...: «էր սորա (Յովհան Մայրազումեցոյ) աշակերտ մի Սարգիս անուն, որ զՍարէլին ախտանայր. զոր հալածեալ մերժեաց յինքենէ»:

Ուրեմն, Յովհանին աղուեսադրոշմ չեն դրել. այլ միայն հալածել են Կովկաս. և այդ Կովկասը պէտք է հասկանալ Աղուանք, որ սահմանակից է Գարդմանին, ուր և գնաց Յովհան Մայրազումեցին: Սարելի հետևող է դարձել ոչ ինքն Մայրազումեցին, այլ նրա աշակերտ Սարգիսը, որին Մայրազումեցին հալածելով մերժել է: Տես և Ստեփաննոս Առողիկ (Ս. Պ. 1885-87—88.) որ Մայրազումեցու վարքի մասին գրում է. «իսկ նորա գնացեալ ի Գարդման՝ անդ կատարէ զկեանս իւր առաքինաջան հանդիսիւ 88». 2. ք.

ճիշդը, ընդհանրական եկեղեցուն, Փոսը առաջ է մղում երեք գլխաւոր, վերև յիշուած, ենթադրութիւնները, այսպէս դատելով. եթէ սուտ է այնքան բազմաթիւ (630) եպիսկոպոսների ժողովը Քաղկեդոնում՝ ուրեմն ոչ եթէ միայն նրանք են յանցաւոր այլ և նրանց հետևողները, ուրիշ խօսքով ամբողջ աշխարհը ցյաւիտեան: «Բայց գուք մի խարուէք, մտածելով, թէ կատարեալ էք», իսկ ամբողջ աշխարհը՝ շեղուել է ճշմարտութիւնից:

Պէտք է ի նկատի առնել և այն, թէ հաւատոյ գործերում որպիսի հեղինակութիւն է պատկանում յոյն եկեղեցուն

Աստուծոյ շնորհը ի վաղուց անտի շնորհուած է մեր յունական երկրին, և Ս. Հոգին սկսած ս. վարդապետների առաջին իսկ օրերից նախամեծարօրէն իջել է յոյների վերայ. մինչև Քրիստոսի գալը՝ յոյները իւրացրել էին արտաքին (հեթանոսական) իմաստութիւնը, — հրաշալի փիլիսոփայութիւնը: Այս զարմանալի իմաստութեան աղբիւրը միայն Աստուած է, որ հրամայում է արեին լոյս սփռել բարիների և չարերի վերայ և անձրեին՝ տեղալ արդարների և մեղաւորների վերայ: Յիրաւի, հին յոյները հեթանոս էին, բայց ըստ բանի առաքելոյն Պօղոսի. «Բանդի արգել Աստուած զամենեսին յանհաւատութեան, զի ամենեցուն ողորմեսցի» (Հռովմ. ԺԱ. 32), և նա թողեց յոյներին ծառայել բազմաստուածութեան, որ դրանով նրանք աւելի արագ և յօժարակամ դառնային զէպի սուրբ երբորդութեան երկրպագութիւնը և հողորդուէին Մարմնոյ և Արեան շնորհներին՝ ինչպէս երբեմն գուարճանում էին դեւերի խրախճանքով և զոհարերութեան ճարպահոտ ծխով. և ինչպէս նրանք երկրպագում էին փայտին ու քարին, այնպէս և այժմ երկրպագում են սուրբ Խաչին և մարմնացեալ Աստուծոյ փրկարար պատկերին:

Նոր Ուխտի շինութեան գործում յոյն ժողովրդի նշանակութիւնը համապատասխան է Հին Ուխտի Իսրայէլի նշանակութեանը:

Ամենակալ Աստուածը ընտրեց Իսրայէլին իւր ծառայ. օժտեց նրան օրէնքներով և մարգարէներով: Յուդայի երկրում տուեց նրան սրբութիւն, շնորհեց թագաւորութիւն և մարգարէութիւն և հոգածութեամբ խրատում էր՝ մինչ Քրիստոս ծնուեց: Իւր համբարձումից յետոյ էլ, Տէրը մարգարէական շնորհը աւանդեց առաքեալներին և հրամայեց տարածել յոյների երկրում, իսկ նրանց միջոցով բոլոր հեթանոսներին: Երուսաղէմի տեղ կանգնեց Կ. Պօլիսը, ինչպէս գրուած է. «Լերինք Սիօնի, կողմանք հիւսիսոյ, քաղաք թագաւորի մեծի» (Սաղմ. ԽԷ. 3), որ Երուսաղէմից յետոյ արդարացի կերպով նկատ է առնուած Կ. Պօլիսը, որը երկրորդ Երուսաղէմ է, շինուած երկրորդ Դաւթից, այն է, ս. Կոստանտինի անունով:

տանդիանոսից, և ուր կատարուած է ասացուածը. «Աստուած ի մէջ նորա, նա մի սասանեացի» (Սաղմ. ԽԵ. 6): Որովհետև այս արքայանիստ քաղաքում յետոյ քարի արձան կանգնեցրին հոստանդինին՝ ս. Թաշը ձեռքին»:

Յոյն-հռոմէական աշխարհի սահմաններում հիմնուել է ընդհանրական եկեղեցի ի դէմս չորս կամ հինգ պատրիարքարանների:

Նոյն Ինքն Աստուծուն, Որը, ըստ տեսլեան Եղեկիէլի, հանգչում է քառակերպութեան կենդանիների վերայ, Որը ստեղծել է աշխարհը չորս եղանակներ տալով և դրախտում չորս գետեր բաժանեց՝ երկիրը ոռոգելու համար. հանելի եղաւ չորս աւետարանիչներով հաստատել չորս պատրիարքական աթոռներ, որոնցով կառավարուած է ընդհանրական եկեղեցին, Անտիոքում՝ Մատթէոսինը, Մարկոսինը՝ Ալէքսանդրիայում, Ղուկասինը՝ Հռովմում և Յովհաննէսինը՝ Կ. Պօլսում—Նոր—Հռովմում. բայց և Երուսաղէմի եպիսկոպոսն էլ տեղի սրբութեան պատճառով, կոչուած է պատրիարք ¹⁾:

բարգ. Յ. Ա. Ե.

(Շարունակելի)



1) Չորս աւետարանիչներով նուիրագործուած աշխարհի չորս կողմերի օրինակին Փոսը անյաջող մեկնութիւն է տալիս՝—նմանեցնելով նրան չորս պատրիարքութիւնների հիմնուելուն. եւ պատմականօրէն սխալ եղբակացութեան է դալի, բացառութեամբ Աղէքսանդրիայի պատրիարքութեան: Փոսը, կարծես զգալով իւր հաւաստիացումի անյաջողութիւնը, իսկոյն ուղղումն է մտցնում նրա մէջ, յիշելով հինգերորդը— Երուսաղէմի պատրիարքութիւնը. եւ այնուհետեւ փոխանակ չորսի՝ հինգ պատրիարքութեան մասին է խօսում: